

«Ռասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամն իրականացնում է **Առաջնորդության զարգացման երկամյա ծրագիր**՝ հանուն կրթական հավասարության և երիտասարդների առաջնորդական, մասնագիտական կարողությունների զարգացման:

Մեր **նպատակն** է յուրաքանչյուր երեխայի՝ անկախ իր սոցիալ-տնտեսական իրավիճակից, տրամադրել հավասար և գերազանց հանրակրթական կրթություն ստանալու հնարավորություն: Մենք վստահ ենք, որ Հայաստանի բոլոր երեխաներն ունեն մեծ ներուժ, որի բացահայտման և ճիշտ ուղղորդման արդյունքում կարող ենք ունենալ սոցիալական փոփոխություն:

### Ինչպե՞ս ենք դա անում

Մենք առաջարկում ենք **Առաջնորդության զարգացման երկամյա ծրագիր**, որի ընթացքում մասնակիցները վերապատրաստվում են և տեղաբաշխվում են Հայաստանի մարզային համայնքներից մեկում և իրենց կրթությանը համապատասխան առարկա են դասավանդում դպրոցներում: Ավելին նրանք հնարավորություն են ստանում իրականացնելու արտադասարանային տարատեսակ խմբակներ, ինչպես նաև պետք է իրականացնեն համայնքային զարգացման նախագիծ ուղղված տվյալ համայնքում առկա խնդիրների լուծմանը:

### Ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջներն են՝

- 2019 թ. հուլիս ամսվա դրությամբ բակալավրի աստիճանի առկայություն
- Հայերենի իմացություն

### Ծրագրին մասնակցելու առավելություններն են՝

- Մասնագիտական աճի հնարավորություն
- Մանկավարժի որակավորում
- Մարզային համայնքների զարգացմանը նպաստելու հնարավորություն
- Ֆինանսական աջակցություն
- Նորարար մտքերը եւ նախագծերը իրականացնելու հարթակ
- Առաջնորդության հմտությունների զարգացման հնարավորություն
- Գաղափարակից մարդկանց հետ կապերի հաստատում
- Կարիերայի զարգացման հնարավորություն

«Ռասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի Առաջնորդության զարգացման երկամյա ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ լրացնելով [հետևյալ առցանց հայտադիմումը](#)

<https://arm.teachforarmenia.org/application2019>

Լրացուցիչ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ [մեր կայքը](#) և հետևյալ մեդիա նյութերը, որտեղ կարող եք լսել մեր գործունեության մասին հիմնադրամի աշխատակիցների և ծրագրի մասնակիցների կողմից

- <https://www.youtube.com/watch?v=5yMPkgPUXwg>
- <https://www.youtube.com/watch?v=7A0jwZtQbYY>

Ծրագրի պայմանների կամ հայտադիմումի վերաբերյալ ցանկացած հավելյալ ինֆորմացիայի համար կարող ես զանգահարել **00374 41 530-154** հեռախոսահամարով կամ գրել էլեկտրոնային նամակ՝ [gor@teachforarmenia.org](mailto:gor@teachforarmenia.org) **հասցեին**